ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29-ը մարտի 2018թ.
ժամը 10^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյանը (ԳԱՊ),

ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակցի՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցի՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին <Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ բացակայում են ծանոթության բաժնում նշված պահանջները: Բացի այդ, <Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ի կողմից ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագիր «ԷԼԻՏ ԳՌՈՒՊ» ՓԲ ընկերության հետ, ինչպես նաև «ԷԼԻՏ ԳՌՈՒՊ» ՓԲ ընկերության և 3-րդ կազմակերպության միջև կնքված սննդամթերքի գնման պայմանագիր, այնինչ համատեղ գործունեության պայմանագիրը անհրաժեշտ էր ներկայացնել մրցույթի մասնակցության հայտով, որը <Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ի կողմից չի ներկայացվել, հետևաբար վերոնշյալ պայմանագիրը որպես նմանատիպ գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և մասնակցին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունները: 06.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց.

<Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ն հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է ապրանքների տեխնիկական բնութագրերի ծանոթության բաժնում նշված պահանջները, մի շարք հարկային հաշիվներ, սակայն չի ներկայացրել նմանատիպ պայմանագրեր, ինչպես նաև ներկայացրել է մինչև անհամապատասխանության շտկումը ուղարկելը ներկայացրած նույն փաստաթղթերը: Քննարկելով վերոնշյալ փաստաթղթերը գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել <Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ի հայտը 3-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժիններով:

<Արտաշատի պահածոների գործարան> ԲԲԸ-ի հայտը մերժելուց հետո 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել <Էլիտ-Ֆուդ> ՍՊԸ-ն, 8-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել <Գեղարդ> ԱԿ-ն, իսկ 9-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել <Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ> ՍՊԸ-ն:

1.2 Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

06.04.2018թ